

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,  
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ**  
***COMMUNICATIONS, NOTES  
ET DISCUSSIONS***



## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1923–1988 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ Հայկական հարցը տեղ զբաղեցրեց խորհրդային դիւանագիտութեան գգրոց-ներում եւ կենդանութիւն էր առնում թուրքիայի վրայ ճնշում գործադրելու դէպքերում միայն։ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը զրկուած էր ազգային խնդիրները ասպարէզ բերելու հնարաւորութիւններից։ Թէեւ, սկզբնական շրջանում, որոշ վերապահութիւններ էին արւում Խորհրդային Հայաստանին, որը արդիւնքն էր 1921ի Փետրուարեան ապստամբութեան, սակայն շուտով գերակայող դարձաւ ձեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական ստալինեան սկզբունքը եւ ոտնատակ արուեցին ցանկացած ազգային յիշեցնող երեւոյթներ, աւանդոյթներ, գաղափարներ, կրթական համակարգից դուրս քշուեցին ազգայինը յիշեցնող բոլոր գաղափարները, որպէսզի սերունդների յիշողութիւնից ջնջուեն ազգային մտածողութեան տարրերը եւ միայն 40ականների սկզբներին, երբ առկայ էր պատերազմի վտանգն, ու անհրաժեշտութիւն էր դառնում հայրենասիրական զգացմունքների արթնացումը, հանրապետութեան դպրոցներում թոյլատրուեց Հայոց պատմութեան ուսուցումը, արուեստն ու գրականութիւնը իրաւունք ստացան չօշափելու ազգային թեմաները։

Նման պայմաններում, բնական է, խօսել Հայկական հարցի լուծման կամ արծարծման մասին, հնարաւոր չէր։ Առաւել եւս, հայ ժողովուրդը արդէն ճաշակել էր իր գերխնդրի լուծման բոլշեւիկեան արտացոլումները՝ յանձնին 1921 Մարտի 16ի Մոսկուայի պայմանագրի, Յունիսին՝ Արցախը Աղբքեջանին, Ջաւախիքը՝ Վրաստանին բռնակցելու, Հոկտեմբերի 13ի Կարսի պայմանագրերի։ Անդրկովկասում ձեւաւորուած փոքր կայսրութիւնները, կենտրոնի կողմից նրանց հովանաւորութիւնը, ԽՍՀՄի, ապա Անդրֆեղերացիայի կազմաւորումը առաւել խորը փակուղի էին մղում Հայկական հարցը։ Այդ էր պատճառը, որ ազգային խնդիրներ առաջադրող Ալ Մեասնիկեանն ու Ա. Խանջեանը

պէտք է դիտուէին որպէս համաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան տեսութեան հակառակորդներ եւ արժանանային ստալինեան խժողով մեքենային: Խորհրդային դիւանագիտութիւնը Լոզանի կոնֆերանսում իր պաշտպանութիւնը արտայայտեց Թուրքիային՝ մէկ անգամ եւս ապացուցելով, որ Հայկական հարցը տեղ չի ունենալու իր վարուելիք քաղաքականութեան մէջ: Որպէսզի փոքր ի շատէ նպաստաւոր պայմաններ ստեղծուէին Հայկական հարցի առթիւ, ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնը 1921 Մայիս-Յուլիս ամիսներին բանակցութիւններ սկսեց Խորհրդային ղեկավարութեան հետ, սակայն դրանք հանդիպեցին յատկապէս ազգային գիտակցութիւնից հեռացած հայ բոլցեւիկների դիմադրութեանը, եւ բանակցութիւններն աւարտուեցին անարդիւնք (խօսքը Ռիդայի բանակցութիւնների մասին է - Յ.Զ.):

Ազգային մտածողութիւնն ու ազգային գաղափարախօսութիւնը դիտելով որպէս իր ոխերիմ թշնամի՝ ստալինեան վարչակարգը սկսեց վարկաբեկել ցանկացած ազգայնական դրսեւորում, առաւել եւս այն կրող ուժերին ու կազմակերպութիւններին: Առաջին հարուածը, բնական է, պէտք է ստանալ ՀՅ Դաշնակցութիւնը: Մի շարք ինտերնացիոնալիստական յայտարարութիւններից ու համախօսականներից յետոյ, 1923 Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին կազմակերպուեց նախկին դաշնակցականների ինքնադատապարտման գործընթացը, որի վերջերգը դարձաւ նոյն թուականի նոյեմբերի 20ին, 250 դաշնակցականների մասնակցութեամբ գումարուած համագումարը, որի յայտարարութեամբ Հայրենիքում ինքնալուծարւում էր ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնը, յանուն «միջազգային բանուորա-գիւղացիական յեղափոխութեան»:

Հարուածի յաջորդ նշանակէտը Հայ Եկեղեցին էր՝ ազգային գաղափարների ու հաւատի պահապանը: Տարածուեց «Ազատ Եկեղեցի» տիրահոչակ գաղափարը, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Հայ Եկեղեցին վարկաբեկելու եւ հեղինակազրկելու փորձ: Այն իր տրամաբանական աւարտին հասաւ 1938 Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Մուրադբէկեանի խեղդամահութեամբ:

Հայ ազգային գաղափարախօսութեան, Հայկական հարցի նկատմամբ ԽՍՀՄ դիրքորոշումները խոստանում էին հիմնայատակ կործանել ազգային մտածողութիւնը եւ հայ ժողովրդին վերածել «եղբայրութիւն, հաւասարութիւն, ազատութիւն» սուսակարգավիճակների կցորդին, որտեղ ի սպառ վերացուելու էին

ազգային մտածողութիւնն ու ազգային պատկանելութիւնը։ Խորհրդային վարչակարգը, սակայն, մոռացութեան էր մատնել հայկական սփիւռքի գոյութիւնը, որը լինելով ահասարսուռ ժամանակների սերունդն ու պատմական Հայրենիքի ազատագրման ջերմ պաշտպանը, ամէն ինչ անելու էր Հայկական հարցը նորից բարձրացնելու, ազգային գաղափարախօսութեան գարթօնքը ապահովելու ուղղութեամբ։

Լոգանի կոնֆերանսից յետոյ հայկական սփիւռքը Հայրենիքին մերձենալու լուրջ փորձեր կատարեց։ Նպատակը Հայկական հարցը համատեղ ուժերով միջազգային ատեաններ բարձրացնելն էր։ Սփիւռքահայութիւնը, Յովհ. Քաջազնունու բնութագրմամբ այն կարծիքին էր, որ հայրենի իշխանութիւնները չեն կարող հեռու մնալ Հայրենիքի ճակատագրի նկատմամբ, կամ՝ «Եկեղեցին մնացել է նոյնը, փոխուել է ժամկոչը»։ Սակայն, Հայոց տան նոր ժամկոչները, տարուած լինելով ինտերնացիոնալիզմի գաղափարներով, ազգայնամոլութիւն էին որակում պատմական Հայրենիքի մասին յիշողութիւններն անդամ։ Աւելին, տուրք տալով այն մտայնութեանը, որ սփիւռքահայութիւնը ընկած է Դաշնակցութեան ազգայնամոլական գաղափարների ազգեցութեան տակ, պետական ու կուսակցական առաջնորդները 1923-1930ական թուականներին հանդէս եկան հրապարակումներով, որոնք պատճառ դարձան Հայրենիք-սփիւռք կապերի խզմանը։

Եղեռն տեսած արտերկրի հայութեան ստուար հատուածները անկարող էին համակերպուել Հայ Դատի ու Պահանջատիրութեան մոռացութեան փաստի հետ եւ անդուլ քայլեր ձեռնարկեցին Հայկական հարցը կենդանացնելու ուղղութեամբ։ 1923ին, երբ Ազգերի լիդայի օրակարգ էր մտցուել Թուրքիային որպէս անդամ ընդունելու հարցը, Յունիսի 28ին «ՀՀ Պատուիրակութեան նախագահ եւ Սեւրի գաշնագիրը ստորագրող՝ Ա. Ահարոնեան» ստորագրութեամբ դիմում յղուց Ազգերի լիդային, որտեղ շարադրելով Հայկական հարցի զարգացումները, ընդգծելով Սեւրի պայմանագրի գոյութիւնը, մասնաւորապէս յիշեցում էր, որ «...հարիւր հազարաւոր գաղթականները ի՞նչպէս կրնան ընդունիլ, որ մէկ կողմէն նկատի չառնուին պետութիւններու եւ Ազգերու Դաշնակցութեան կողմէն իրենց հանդէպ ստանձնուած յանձնառութիւնները, միան միւս կողմէն Թուրքիան, իրենց բոլոր դժբախտութեանց պատասխանատուն՝ մուտք գործէ Ազգերու Դաշնակցութեան մէջ՝ առանց արդարութեան հատուցման։

Վերջապէս, այդ տողերը ստորագրող Պատուիրակութիւնը պարտականութիւն ունի իր ամենավճռական վերապահումներն ընելու Թուրքիոյ ներկայ սահմաններուն վերջնական նաևաշման մասին, քանի որ հայ ժողովուրդը չի կրնար ընդունիլ որ սեփականազրկուի իր դարաւոր իրաւունքներէն եւ պատմական ժառանգութենէն:

Հակառակ իր կրած ծանր յուսախարութիւններուն՝ հայ ժողովուրդը հաւատով կը տածէ որ Ազգերու Դաշնակցութիւնը պիտի զգուշանայ նոր անարդարութիւն մը գործելէ եւ անհիկա կը մարդէ որ Թուրքիոյ մուտքը Ազգերու Դաշնակցութեան մէջ, սկզբնակէտն ըլլայ Արդարութեան եւ Հատուցումի նոր դարաշրջանի մը»<sup>1</sup>:

**Թէ ի՞նչ արձագանգ ունեցաւ դիմումը, Ազգերի լիգան ի՞նչ հետեւութեան յանդեց, գրանցուած է պատմութեան էջերում, կարեւորը այն փաստն էր, որ հայ ժողովուրդը երբեք չի համակերպուելու իր իրաւունքների ոտնահարման հետ եւ անդուր աշխատանքով բարձրացնելու է Հայկական հարցը:**

Սփիւրքահայութեան ձգտումները, բնական է, պաշտպանութեան չէին արժանանալու մայր Հայրենիքի կողմից: Բոլշեւիկեան վարչակարգը, խեղղելով Հայկական հարցը, աւելի էր սերտացնում յարաբերութիւնները թուրքական իշխանութեան հետ, որի արտայայտութիւններից մէկն էլ 1936 Յուլիսի 20-ին Լոզանի պայմանագրի՝ նեղուցների հարցի վերանայման, փոփոխութեան նոր պայմանագրի առթիւ թուրքական կողմին ուղղուած, ոչ անյայտ գործիչ Լ. Կարախանի շնորհաւորանքն էր, պայմանագիր, որի կայացմանը, թուրքամէտ վճռին մեծագոյնս նպաստել էր ԽՍՀՄը եւ նեղուցների տնօրինութիւնը յանձնուել էր Թուրքիային: Մէկ տարի անց, Լեհաստանում դեսպան նշանակուած նոյն Լ. Կարախանը, հանդիպելով Հայկական պատուիրակութեան հետ, որը ակնկալում էր Հայկական հարցով ԽՍՀՄ աջակցութիւնը, աւելի ընդդոււած ներկայացրեց Խորհրդային երկրի դիրքորոշումը Հայկական հարցում: Զժխտելով, որ ԽՍՀՄ-ը գէնքով, ոսկով, զինուորական մասնագէտներով օգնում է Թուրքիային, դեսպանը դա համարելով իր երկրի արտաքին քաղաքականութեան անփոփոխ դիրքորոշում, աւելացնում է՝ «...եթէ վաղը մեր ընդհանուր շարժման շահը պահանջէ մեզմէ զոհել անդրկովկասի բովանդակ հայութիւնը մինչեւ վերջին հայը, կրնանք ՈՉ ԽՍԿ

<sup>1</sup> Լ.ԶԵԱՆ, Գ., Հայաստան եւ հայ դատ, Երևան 1991, 331:

Մէկ վայրկեան տատանում ունենալ այդ գոհողութեան առջեւ»<sup>2</sup> (ընդգծումը հեղինակինն է):

ԽՍՀՄ ղեկավարութեան հակահայկական քաղաքականութեան արդիւնքում հաշուեյարդարի ենթարկուեցին ՀԿԿ կե առաջին քարտուղար Ա. Խանջեանը (1936 Յուլիսի 9), Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէգեանը (1938 Ապրիլի 10):

Մօտենում էր Երկրորդ աշխարհամարտը: 1939 Օգոստոսի 23ին կնքուեց խորհրդադերմանական պայմանագիրը, Օգոստոսի 31ին ԽՍՀՄ Գերազոյն Խորհուրդը վաւերացրեց այդ պայմանագիրը, եւ Սեպտեմբերի 1ին գերմանական զօրքերը ներխուժեցին Լեհաստան: Ակսուեց Երկրորդ աշխարհամարտը: Սեպտեմբերի 28ին ԽՍՀՄ էր Գերմանիայի միջեւ կնքուեց մի նոր պայմանագիր, որով Եւրոպան ու Մերձբալթիկան ենթարկուեցին ազգեցութեան շրջանակների բաժանման: Թուրքիան, որ գաղտագողի հետեւում էր իրադարձութիւնների զարգացմանն ու քաջատեղեակ էր Փաշիզմի հակահրէական գաղափարախօսութեանը, պատեհ առիթը բաց չժողեց, որպէսզի գերմանական ազգայնամոլութեան զոհերի շարքում դասի նաեւ հայ ժողովրդին եւ գերմանական խժողով մեքենայի երախը նետելով հայութեանը, մէկընդմիշտ լուծի Հայկական հարցը: Թուրքական դիւանագիտութեան բեղուն գործունէութեան արդիւնքում Գերմանիայում, յատկապէս իշխանութիւնների վերնախաւում, այն համոզումը հաստատուեց, որ հայերը հանդիսանում են ոչ արիական ծագումով ժողովուրդ եւ ենթակայ են հրեաների ճակատագրին: Անհրաժեշտութիւն էր դառնում այդ մտայնութեան վերացումը, ինչին էլ առաջիններից մէկը ձեռնամուխ եղաւ Գ. Նժդեհը:

Վտանգի տակ էր ոչ միայն Հայկական հարցի, այլև ամբողջ հայ ժողովրդի ճակատագրիրը: 1934ին, Պոտսդամում, գերմանացի գիտնականների աշխատութիւնների ընդգրկմամբ, լոյս է տեսնում «Հայկականութիւնը արիականութիւն է» վերնագրով ժողովածուն, որը պէտք է փարատէր այն մխալ տեսութիւնը, որով հայերը համարւում էին սեմիտական ծագման ժողովուրդ: Թերեւս ժողովածուն դրական ներգործութիւն չի ունենում, քանզի 1939ին վերահաստատում է հայերի ոչ արիական ծագումը: Անհրաժեշտութիւն էր դառնում անմիջական շփումների օգ-

<sup>2</sup> Անդ, 335:

նութեամբ փոխել հայերի նկատմամբ ձեւաւորուող գաղափարախօսութիւնը, եւ Գ. Նժդեհի նախաձեռնութեամբ հանդիպումներ են կազմակերպում Սովիայում Գերմանիայի դեսպանի հետ, որի խորհրդով էլ Գ. Նժդեհը 1942ի վերջին մեկնում է Բեռլին։ Բանակցութիւնների արդիւնքում Գերմանիայի իշխանութիւնները խոստանում են դադարեցնել Հակահայկական քարոզչութիւնը, պայմանով, որ «մենք եւ մեր հերթին մեր ծառայութիւնը մատուցեինք իրենց», որը ամփոփում էր Համագործակցութեամբ՝ «գերմանական բանակի՝ Թուրքիա մուտք գործելու նախօրեակին»,- գրում էր Գ. Նժդեհը, 1945 Փետրուարի 26-ին, Վորոշիլովին ուղղուած նամակում<sup>3</sup>։

Այնուհետեւ, 1942 Դեկտեմբերի 15-ին, կազմակերպում է Հայոց Ազգային խորհուրդ, նախագահ Ա. Աբեղեան, փոխնախագահ՝ Ա. Գիւլիսանդանեան, անդամներ՝ Դրօ, Վ. Փափազեան, Ա. Մուրադեան, Դ. Դաւիթխանեան, քարտուղար՝ Հ. Բաղդասարեան։ Խորհուրդն ունէր «Ազատ Հայաստան» անունով պաշտօնաթերթ, խմբագիր՝ Ա. Գիւլիսանդանեան, փոխխմբագիր՝ Գ. Նժդեհ։ Խորհուրդը գործեց մինչեւ 1943 Նոյեմբեր։

Կտրականապէս մերժելով Խորհրդային բանակի դէմ որեւէ գործողութեան մասնակցելու առաջարկը կամ այդ նպատակին ծառայելը, Խորհուրդը հետապնդում էր միայն «հայութեան գլխին կախուած՝ երեաների ճակատագրին արժանանալու շատ իրական վտանգը» վերացնելու, հայ ուազմագերիներին անխուսափելի ոչնչացումից փրկելու, եւ՝ «Գերմանիայի կողմից Թուրքիա ներխուժելու դեպքում Նժդեհը յոյս ունէր հայկական ջնկատներով կռուել Թուրքիայի դէմ՝ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու եւ Արևմտահայաստանն ազատագրելու ակնկալիքով»<sup>4</sup>։

Ֆաշիստական Գերմանիայի հետ գրեթէ նոյն ծրագրով համագործակցութիւն էր Հաստատել նաեւ Դրօն։ Կազմելով Հայկական Լեգէոն, Դրօն բացառապէս հետապնդում էր Հայրենիքը ազատագրելու, գերմանական վայրագութիւնները կանխելու, թուրքական վտանգը բացառելու նպատակները։ Որպէս յաւելում նշենք, որ Դրոյի շնորհիւ Հազարաւոր Հայ ուազմագերիներ փրկուեցին անխուսափելի ոչնչացումից, ազատուեցին մահուան ճամբարներից եւ ներգրաւուելով Լեգէոնում, Հնարաւորութիւն

<sup>3</sup> ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, Ռ., Վարք Նժդեհի, Երևան 2001, 119:

<sup>4</sup> Անդ, 120-121:

ստացան «փախուստի» ճանապարհով նորից ներգրաւուել ֆաշիզմի դէմ պայքարին՝ դառնալով պարտիզանական ջոկատների անդամներ կամ նորից կրելով խորհրդային բանակի համազգեստ, իրենց պարտքը կատարել Հայրենիքի նկատմամբ: 1941 Դեկտեմբերին կազմուած Լեգէոնը իր շարքերում ունէր 20000 զուտ ռազմագերիներից հաւաքագրուած զինուոր: Յայտնի էր, որ Թուրքիան սրտատրով սպասում էր գերմանական բանակի յաղթարշաւի աւարտին, յատկապէս Ստալինգրադի ճակատամարտի ելքին, որպէսզի իրականացնէր նորից կենդանութիւն ստացած պանթուրքիզմի ծրագիրը: Դրոյի լեգէոնը իրականացնելու էր Հայրենիքի պաշտպանութիւնը եւ հասնելով Հիւսիսային կովկաս, Դրօն այդ առթիւ տեղեկացնում է Հայաստանի ղեկավարութեանը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին տեղի ունեցան ԽՍՀՄի, ԱՄՆի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարների Թեհրանի (1943 Նոյեմբերի 28 - Դեկտեմբերի 1), Եալթայի (1945 Փետրուարի 4-11), Պոտսդամի (1945 Յուլիսի 17 - Օգոստոսի 2) կոնֆերանսները: Թեհրանում քննարկման նիւթ էր Թուրքիայի՝ պատերազմի մէջ մտնելու խնդիրը, որի յատակեցումը իր վրայ վերցրեց՝ Զերչիլ՝ ընդգծելով, որ Թուրքիայի նախագահի հետ հանդիպման ժամանակ նրան կը ներկայացնի «այն տհաճ պատկերը, որ Թուրքերի առջեւ կը ներկայանայ այն դէպքում, եթէ նրանք չհամաձայնուեն մտնել պատերազմի մէջ, եւ հաճելի պատկերը՝ հակառակ դէպքում»:

Թուրքական դիւանագիտութիւնը, ականջալուր լինելով անդլիացի յուշարարի ձայնին, ոչ միայն պատերազմ յայտարարեց իր նախկին դաշնակցին, այլեւ պատերազմի աւարտի հետ էր կապում որոշ ակնկալիքներ: Թուրքիայի խնդիրը քննարկուեց նաեւ Պոտսդամում, սակայն չիրականացան Ստալինի կանխատեսումները՝ «Վրացական» համարուած Հայկական հողերը վրացական կայսրութեանը բռնակցելու եւ Թուրքիայի խնդրում: Տրումենի բնութագրմամբ՝ դրանք անուանուեցին խորհրդա-թուրքական հարցեր, ու դուրս մնացին յետագայ ուշադրութիւնից:

Մինչ այդ, 1944ին, Ռամկավարները Պետրոս Թէրզեանի նախագահութեամբ կազմեցին «Ամերիկահայ Ազգային Խորհուրդ», որը պէտք է զբաղուէր ազգային դատի խնդիրներով:

<sup>5</sup> Թեհրան, Յալթա, Պոտսդամ, Երեւան 1970, 52:

Նման խորհուրդ ստեղծուեց նաեւ Ֆրանսիայում՝ Արշակ Չռպանեանի գլխաւորութեամբ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին արտերկրի հայութիւնը հանգանակութիւնների ճանապարհով «Սասունցի Դաւիթ» եւ «Գեներալ Բաղրամեան» տանկային շարասիւները նուրիբց խորհրդային բանակին, ակտիւ մասնակցութիւն ունեցաւ Եւրոպայի հակագերմանական շարժմանը։ Այս ծառայութիւնները նկատի ունենալով՝ 1945 Ապրիլին Ստալինն ընդունեց կաթողիկոսական տեղապահ, արքեպիսկոպոս Գ. Չորեքչեանին։

«Սովետական Հայաստան» թերթում 1945 Յունիսի 13ին տպագրուեց ՏԱԱՍԻ հաղորդագրութիւնը, որը ընթերցողներին տեղեկացնում էր յիշեալ Խորհրդի, Մոսկուային ուղղուած նրա դիմումի մասին, որտեղ խօսւում էր Թուրքիայի զաւթած հայկական հողերը Հայաստանի Խորհրդային Հանրապետութեանը միացնելու մասին։ Նոյն 1945 Յունիսին, Խորհրդային երկրի արտաքին գործերի նախարար Մոլոտովը երկրորդ անգամ Թուրքիայից պահանջում էր Կարսն ու Արդահանը, վերականգնել 1914 ռուս-թուրքական սահմանը։

Պէտք է միայն կռահել, թէ այս իրադարձութիւնները ինչ նոր յոյսեր էին ծնելու Հայկական հարցի լուծման ուղղութեամբ։ Խորհրդային ղեկավարութիւնը չէր արգելում հայութեան խանդավառութիւնը, աւելին, 1946 Դեկտեմբերի 2ին կենտրոնական կառավարութիւնը յատուկ որոշում կայացրեց արտերկրի հայութեան ներգաղթ կազմակերպելու մասին։ Թւում էր, թէ, ի վերջոյ, հասունանում է արդարութիւնը վերականգնելու ժամանակը։ Իսկ բարեյոյս իրադարձութիւնները յաջորդում էին իրար։

1945 Յունիսին Հայկական հարցը իր արտացոլումը գտաւ Ազգային Եկեղեցական ժողովում, որ Յունիսի 7ին նորընտիր կաթողիկոս Գ. Չորեքչեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, Երուսաղէմի Պատրիարքի ստորագրութեամբ դիմում յղեց Ստալինին՝ նրանից ակնկալելով արդարութեան վերականգնում եւ խլուած տարածքների միացում Հայաստանի Խորհրդային Հանրապետութեանը։

Յունիսի 26ին, երբ փակուեց Ազգային Եկեղեցական ժողովը, պատգամաւորները մի նամակ եւս յղեցին Ստալինին. «...մենք եւս ձայնակցելով Ամերիկահայ Ազգային Խորհրդի գեկլարացիային՝ ուղղուած Սան Ֆրանցիսկոյի պատգամաւորներուն եւ մամուլին, մէկ ու կէս միլիոն դժբախտ եւ հայրենազուրկ

հայերու անունով կը դիմենք ձեզ՝ նոյնպէս իրագործել հայ ժողովրդի ազգային ամբողջացումը, կցելով Թուրքահայաստանի հողերը վերադարձը իրենց մայր երկիրը»<sup>6</sup>:

**ԽՄԿԿ ԿԿ** պաշտօնաթերթ «Պրաւդան», անդրադառնալով նամակին, հայութեան պահանջը մեկնաբանում է այսպէս. «Արտասահմանի մէկուկէս միլիոն հայութիւնը միջոցով էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ապա Հայաստանի կառավարութեան դիմում մը կը կատարէ, որպէսզի իր արդար իրաւունքն եղող ծննդավայր հայրենիքը՝ Վան, Պիթլիս եւ Կարին կցուին Սովետ Հայաստանին: Կասկած չկայ, որ Սովետ Հայաստանի ժողովուրդն ու կառավարութիւնը չէին կրնար տարբեր կեցուածք ցոյց տալ արտասահմանի իրենց եղբայրներուն հանդէպ, եթէ ոչ անոնց առջեւ լայն բանալ հայրենիքի դռները... մեծ անարդարութիւն մըն է նոյնպէս Ռուսական կովկասի մաս կազմող Սուրմալուի, Կարսի եւ Արտահանի նահանգներուն՝ թուրքերուն ձգուփլը... կովկասահայութեան իրԱհՈՒՆՔՆ է ՍՈՒՐՄԱԼՈՒԻ, ԿԱՐՍ ՈՒ ԱՐՏԱՀԱՆ, ԻՍԿ ԹՐՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ իրԱհՈՒՆՔՆ է ՎԱՆ, ՊԻԹԼԻՍ ՈՒ ԿԱՐԻՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ»<sup>7</sup> (ընդգծումները հեղինակինն են):

**Գրեթէ** նոյն բովանդակութիւնն ունէր ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Յարութիւնեանի 1946 Փետրուարի 1ին ընտրողների հետ հանդիպման ժամանակ արտասահմած ճառը. «Թուրքիայի կողմից հայկական հողերի վերադարձը նրանց խսկական տիրոջը՝ Սովետական Հայաստանին, արդարացի է, եւ այդ հարցը իսկամ կենսական նշանակութիւն ունի ամբողջ հայ ժողովրդի յետագայ զարգացման համար: Թուրքիայի կողմից բռնի կերպով զաւթուած այդ (Կարս, Արդահան եւ Մըջանները) եւ միւս հայկական մարզերը վերադարձնելու վերաբերեալ հողային պահանջը արդարացի պահանջ է: Սովետական Միութեան ժողովուրդների պաշտպանութեամբ մենք կը հասնենք մեր օրինական պահանջների բաւարարմանը...»<sup>8</sup>:

Գ. Յարութիւնեանի ելոյթը, տասնամեակներ շարունակ լուսութիւնից յետոյ, ոգեւորիչ ազդակ հանդիսացաւ արտերկրի հայութեան համար: Զգալով հայրենի իշխանութիւնների սրտա-

<sup>6</sup> ԼԱԶԵՍՆ, Գ., անդ, 350, 351:

<sup>7</sup> ԼԱԶԵՍՆ, Գ., անդ, 353:

<sup>8</sup> Ի Սովետական Հայաստան, 1946, Փետրուարի 1:

ցաւութիւնը պատմական Հայրենիքի ազատագրութեան խնդրում՝ արտերկրի ազգային քաղաքական ուժերը ծաւալեցին առաւել եռանդուն գործունէութիւն։ Դեռևս 1945ի ամռանը ՀՅ Դաշնակցութիւնը ՄԱԿի Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովից պահանջում էր բռնազարժուած հողերի միացումը Խորհրդային Հայաստանին։

Խորհրդային դիւանագիտութիւնը այս անգամ էլ հեռու չմնաց Հայկական հարցը աղաւաղելու, իր շահերին ծառայեցնելու դիրքերից։ Այդ քաղաքականութեան նախապատրաստութեան առաջին փուլը սկսուեց Վրաստանի տարբերակով, որը լինելով Ստալինի բանարկութեան արդիւնքը, հող էր պատրաստում անվիճելի հայկական տարածքները Վրաստանին բռնակցելու համար։ 1945 Դեկտեմբերի 14ին Թբիլիսիի «Կոմունիստ» թերթում, «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերնագրով տպագրուեց վրացական ակադեմիայի ակադեմիկոսներ Ս. Զանաշիայի եւ Ն. Բերձենիշվուլիու յօդուածը, որը նոյնութեամբ արտատպուեց «Պրաւդա» թերթում, դեկտեմբերի 20ին։ Յօդուածում զարգացւում էր այն տեսակէտը, որ վրաց ժողովուրդը օրինական պահանջատէր է Արդահանի, Արդոււինի, Օլթիի, Թորթումի, Սպերի, Բաբերդի, Գիւմիւշանէի շրջանների։ Ստեղծելով հիմք, որի առաջին անկիւնաքարը դրել էր 1945ի Մարտին՝ 1925ի Թուրքիայի հետ բարեկամական դաշինքից հրաժարուելու, ապա ՄԱԿում ԽՍՀՄ ներկայացուցիչ Ա. Վիշինսկու Հոկտեմբերի 25ին Քաղաքական կոմիտէում ունեցած ելոյթով։ Ստալինը թերեւս ակնկալում էր թէ՛ Խորհրդային Հայաստանի, թէ՛ արտերկրի հայութեան արձագանքները։ Դրանք չուշացան, Յ. Օրբէլին պատասխան տուեց այդ հակագիտական տեսութեանը, իսկ ամերիկահայութիւնը ստիպեց խորհրդային ներկայացուցչին, 1945 Նոյեմբերի 25ին, կազմակերպել առանձին հանդիպում հայկական համայնքի ներկայացուցիչների հետ։ Պատասխանելով մեղադրանքներին Ա. Վիշինսկին օգտագործեց դիւանագէտների հնացած ու մաշուած զէնքը՝ յայտարարելով, թէ թերթերը աղաւաղել են իր մտքերը, որ ինքը երբեք յիշեալ շրջանները չի յայտարարել վրացական եւ այլ խուսափողական վարժանքներով փորձեց ապակողմնորոշել հայ համայնքի ներկայացուցիչներին։

Խորհրդային դիւանագիտութեան խարուսիկ քայլերը աւելի ամրացուեցին, երբ 1946 Նոյեմբերի 6ին Նիւ Եղրքում ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովն ընդունեց ամերի-

կահայերի յանձնախմբին: Մտերմական գրոյցներից այն կողմ չանցաւ հանդիպումը, սակայն խորհրդային կողմի ակնկալիքը պարզ էր՝ ճշգրտել, թէ արտերկրի հայերը օժանդակութիւն ցոյց տալով են ծրագրուած ներգաղթին, թէ՞ ոչ: Հետաքրքրութիւն ներկայացնող հարցը պարզելուց յետոյ հանդիպումն աւարտուեց, եւ խորհրդային դիւանագիտութիւնը մէկ անգամ եւս «ապացուցեց» իր հոգածութիւնը Հայկական հարցի նկատմամբ: Հանդիպմանը հետեւեց նոյն թուականի դեկտեմբերի 2ի ԽՍՀՄ կառավարութեան որոշումը, եւ կազմակերպուեց սփիւրքահայերի ներգաղթը: Նախատեսւում էր ներգաղթեցնել 350-400000 հայեր, սակայն ներգաղթեցին միայն 90000 հայեր, որոնց մի ստուար զանգուածը յետագայում, «արտասահմանեան լրտես» մեղադրանքով աքսորուեց Սիբիր ու Ալթայի երկրամաս:

ԽՍՀՄի կողմից Հայկական հարցի արծարծումը անհանգստացրեց Անդլիայի կառավարութեանը: Հակառակ այն մտայնութեանը, թէ հայկական գերխնդիրը լուծման փուլ է մտնում, խորհրդային դիւանագիտութիւնը բացարձակապէս չունէր այդ հրահանգաւորումը: Ամենաառաջինը ձեռնարկուած քայլերը նպատակամղուած էին հայկական տարածքները Վրաստանին միացնելուն եւ չէին հետապնդում Հայկական հարցը լուծելու նպատակը: Նոյնիսկ այս դիւանագիտական խաղը արթնացրեց Հայկական հարցի ոխերիմ թշնամի Անդլիային: 1945-1946ին անդլիական մամուլում յայտնուեցին յօդուածներ, որոնք թուրքապաշտպան լինելով հանդերձ, անդրադարձ կատարելով պատմութեան խորքերը, իրենց իսկ դաւերի ճանապարհով հայաթաւած հայութեան պատմական Հայքերիքի առթիւ Անդլիայի արտաքին գործերի նախարարը 1946 Փետրուարին Համայնքների պալատում յայտարարում էր, թէ ինդիրն ունի բազմաթիւ պարագաներ, որոնցից ամենակարեւորը ժողովրդագրութիւնն է՝ «...սակայն որքան ես կրցած եմ ուսումնասիրել՝ բնակչութեան այնպիսի տեղափոխութիւն եղած է, որ ազգութեան խնդիր այլեւս մնացած չէ»<sup>9</sup>:

«Զիդերու պատերազմ» անուանելով Հայկական հարցի բարձրացումը՝ անդլիական դիւանագիտութիւնը մոռացութեան էր մատնում, որ հովանաւորելով կարմիր սուլթանին ու հայկեր թուրքական այլ ուժերին՝ լորդերը արդէն հոգացել էին չափազանց կարեւոր այս խնդիրի լուծման մասին, որպէսզի Ռու-

<sup>9</sup> Լ.ԶԵՍՆ, Գ., անդ, 360:

սաստանին զրկէին Մերձաւոր Արեւելքում մըցակից դառնալու ամենաիրական հնարաւորութիւնից:

Հայկական հարցի նոր զարգացումները, կապուած լինելով Երկրորդ աշխարհամարտից յետոյ քաղաքական նոր հարթութիւնների ճշգրտման փաստի հետ, յատկապէս խորհրդային կողմի համար չունէր խնդրին լուծում տալու յաւակնութիւնը: Այն լոկ քարոզչութեան բնոյլթ ունէր եւ հանդիսանում էր իր ազդեցութիւնից հեռացած Թուրքիային զգաստացնելու նպատակը: Հայ քաղաքական միտքը կրահում էր այս նոր խաղի իմաստը, թէ՞ ոչ, բայց պատեհ առիթը օգտագործելը դառնում էր անհրաժեշտութիւն: Այս նպատակով էլ, 1947 Ապրիլի 30-Մայիսի 4ը նիւ Եռոքում դումարուեց «Համաշխարհային Հայկական Կոնդրէս», որին մասնակցում էին 22 երկրների 715 ներկայացուցիչներ (որոշ աղբիւրներ նշում են 705 ներկայացուցիչների մասնակցութեան մասին, ինչպէս Լազեան Գ. եւ ուրիշներ- Յ.Զ.):

Կոնդրէսին ողջոյնի հեռագրեր էին յղել ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահ Մ. Պապեանը, աշխարհահռչակ գիտնական Վ. Համբարձումեանը, Գէրոգ Զ. Կաթողիկոսը: Կաթողիկոսի հեռագրում ընդգծում էին հայութեան առաջ կանգնած կարեւորագոյն խնդիրները՝ «ա) Հայութեան ազգահաւաքումը իր նուիրական հայրենի հողի վրայ եւ բ) վերադարձումը մեր մայր Հայրենիքի բռնագրաւուած հողերի»: Ապա. «Մենք անվերապահ իրաւունք ունենք ե՛ւ պահանջելու, ե՛ւ ակնկալելու մեր արդար դատի պաշտպանութիւնը՝ մանաւանդ այսօր, երբ Ատլանտեան Խարտիան եւ Միացեալ Ազգերի կանոնադրութիւնը ազդարարել են մարդկային իրաւունքների, ազգերի ազատութեան, քաղաքական արդարութեան եւ այլ բարձր սկզբունքներ»<sup>10</sup>:

Կոնդրէսը յուշագրով դիմեց ՄԱԿին, որտեղ ներկայացնելով Հայկական հարցի պատմութիւնը, սկսած 1878ից, յիշատակելով Սեւրի պայմանագիրը՝ «...յանուն աշխարհի բոլոր հայերուն, յարգանօք կը խնդրէ Գերագոյն մարմնէդ հայոց հողային պահանջները դնել Միացեալ Ազգերու օրակարգին վրայ եւ արդար ու հաստատակամ վճռով մը՝ ազատագրել տակաւին թրքական լուծին տակ գտնուող Ուիլսընի սահմանագծած հայապատկան երկրամասը, եւ վերադարձնել զայն իր օրինաւոր տիրոջ՝ Հայկական Հանրապետութեան:

<sup>10</sup> Ա.Հ.ՐՈՒՆԵԱՆ, Գ., Մեծ երազի համբուն վրայ, Լոս-Անջելես 1986, 198:

*Մարդկութիւնը եւ արդարութիւնը կը պահանջեն այս իրաւացի պահանջի իրագործումը ձեր վսեմ ատեանէն»<sup>11</sup>:*

Կոնդրէսի յուշագիրն ուշադրութեան չարժանացաւ, սակայն կոնդրէսի գոյութիւնն իսկ, նրա ընդունած որոշումը խօսում էին Հայկական հարցի նոր փուլի սկսման մասին, որը նախապատրաստական շրջան լինելով, մեծագոյնս նպաստեց 60-ական թուականների ազգային գարթօնքին:

Կոնդրէսի գումարումը ԱՄՆում երբեմն տարակուսանք է առաջացնում այն պարզ հաշուարկով, որ սառը պատերազմի շրջանում, երբ ԱՄՆին յաջողուել էր իր հովանաւորութեան տակ առնել թուրքիային, թոյլատրում էր իր տարածքում նման մի կազմակերպութեան գործունէութիւնը: Տարակուսանքը, սակայն, երկար կեանք չունեցաւ: 1947 Ապրիլին ԱՄՆի նախագահ Տրումենը իր երկրի կողմից յայտարարեց, որ երաշխաւորում է Յունաստանի եւ թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը: Յայտարարութիւնը ուղղուած լինելով ԽՍՀՄ ակնկալիքների, հայութեան յոյսերի դէմ, ինչպէս գնահատում է Գ. Ահարոննեանը, ԱՄՆին վերածում էր «հայոց արդարագոյն դատին ոխերիմ հակառակորդ» երկրի<sup>12</sup>:

Հայկական հարցը նոր փակուղի մտցնելու գործընթացում պակաս գերակատարում չունեցաւ ԽՍՀՄը: 1953 Մայիսի 30ին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովը յայտարարեց, որ իր երկիրը թուրքիայից հողային պահանջներ չունի: Շարունակելով դիւանագիտական թաքստոցներ կառուցելու իր քաղաքականութիւնը՝ ԽՍՀՄը, ուսնահարելով հայ ժողովրդի սրբագոյն զգացմունքները, հայութեան պատմական Հայրենիքի վաճառքի քաղաքականութիւնը շարունակելով, վնասուելով թուրքիային իր ազգեցութեան տակ գցելու ուղիներ, ցանկանալով նրան հեռու պահել ՆԱՏՕի մէջ մտնելու մտքից, զգուշացնելով յիշեալ դաշինքին մասնակցելու հետեւանքներից, այնուամենայնիւ Հայկական հարցի ցուցաբերում էր մշակուած մօտեցումներ: Ստալինի մահից յետոյ թէ՛ Մալենկովը, թէ՛ Խրուչչովը շարունակեցին այդ քաղաքականութիւնը եւ 1956 Նոյեմբերի 4ին Ն. Խրուչչովը մէկ անդամ եւս յիշեցրեց, որ ԽՍՀՄը հողային պահանջներ չունի թուրքիայից, որ վրացական պահանջների կնքա-

<sup>11</sup> ԼԱԶԵԱՆ, Գ., անդ, 378:

<sup>12</sup> ԱՀԱՐՈՆՆԵԱՆ Գ., անդ, 200:

Հայրը Բերիան էր, որ նրա մահով էլ մոռացուեցին նման հարցադրումները:

Խրուչչովեան «Ճնհալի» տարիները հնարաւորութիւն ընձեռեցին արթնացնել հայութեան պատմական յիշողութիւնը: Հայաստանից խլուած տարածքների հարցը դարձաւ հայ առաջաւոր մտաւորականութեան պահանջի հիմնական թեման: Նորից օրակարգ բերուեց Արցախեան խնդիրը: Սպասում էր, որ 1961ին այցելելով Հայաստան եւ ի հատուցումն հայ ժողովրդի մեծ ներդրման, ՀԽՍՀ 40ամեակի պատուին, լուծում կը ստանայ Արցախի խնդիրը, սակայն Ն. Խրուչչովը յայտարարեց, որ ԽՍՀՄում ազգային հարցը լուծուած է:

Խնդրին նման մօտեցումը Հայկական հարցը նորից մղում էր անբարեյոյս վախճանի: Սակայն համայնավարական երկրում փորձելով խեղդել ազգային մտածողութիւնը, կոմունիստական վարչակարգը անկարող էր լուցնել աշխարհասփիւռ հայութեան ձայնը: Զգալով վտանգաւոր զարգացումների անկանխատեսելիութիւնը, խորհրդային վարչակարգը նախաձեռնեց սփիւռքահայութեան տարանջատման գործընթացը, որի իրականացման նպատակով էլ կազմուեց Սփիւռքահայութեան հետ մշակութային կապերի կոմիտէն, աշխատանքներ էին կատարում հայ եկեղեցու պառակտման ուղղութեամբ, որպէսզի հայութեանը զրկեին ընդհանուր պայքարի հնարաւորութիւնից: ՊԱԿի գործակալների բեղուն գործունէութիւնը տուեց ցանկալի պտուղներ: Հայ եկեղեցին պառակտուեց, սփիւռքի հասարակական-քաղաքական ընդհանրութիւնը իր տեղը զիջեց անջատ-անջատ, իրար նկատմամբ անվտանքութեամբ լցուած կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների գործունէութեամբ:

Մայր Հայրենիքում, սակայն, չնայած հալածանքներին ու հետապնդումներին, հայրենասիրական գործունէութիւնը ծաւալուեց ընդյատակում: Ազգային գիտակցութեան փայլուն օրինակ էր 1963ին 25000 արցախցիների դիմումը կենտրոնական իշխանութեանը: Նախադէպը յուսադրող էր: Գրչի մէկ հարուածով Ղրիմը միացուեց ՈՒԽՍՀին: Կոմունիստական վարչակարգը չէր սպասում նման անդրադարձի, եւ սկսուեցին հալածանքները: Մոռացութեան մատնուեց արցախցիների դիմումը, իսկ աղրբեջանական ազգայնամոլութիւնը աւելի խստացրեց Արցախի նկատմամբ ահաբեկչական գործունէութիւնը: Արցախցիների դիմումը գաղտնի ճանապարհով հասաւ արտերկիր, տպագրուեց

մամուլում, եւ առաջին անգամ թէ՛ սփիւռքահայութիւնը, թէ՛ համաշխարհային հասարակութիւնը ծանօթացաւ հայ ժողովրդի մէկ հատուածի դառը ճակատագրին:

Հայկական հարցի այս փուլում անհրաժեշտ էր պայքարին կազմակերպուած բնոյթ հաղորդել, բացառել հակասահմանադրական ելոյթները: 1962ին ստեղծուած ու գործող գաղտնի խմբերը կազմակերպական, քարոզական մեծ աշխատանք կատարեցին ազգային գիտակցութեան զարթօնքն ապահովելու գործում: Նրանց տարածած ձեռագիր ու խմորատիպ, լուսանկարային տարբերակներով բազմացրած թուոցիկները մեծ տարածում էին ստանում: ՊԱԿը թէեւ մեծ աշխատանք էր կատարում ակտիւ գործիչներին ասպարէզից վերացնելու գործում, սակայն նրանց փոխարինելու էին գալիս նորերը: Յատկապէս ուսանողութիւնը մեծ համակրանք էր տածում հայրենասիրական խմբակների գործունէութեան նկատմամբ: Գնալով իմաստագրկուում էին ինտերնացիոնալիզմի ու եղբայրութեան կարգախօսները: Ժողովուրդն արդէն յստակ պատկերացում ունէր իր գերիսնդրի նկատմամբ իրականացուած դաւադրութիւնների նկատմամբ: Մերձբալթիկայում, Ուկրաինայում արդէն բացայատ պահանջներ էին դրում վերականգնել ժողովուրդների իրաւահաւասարութիւնը, լուծում տալ ազգային խնդիրներին, վեր էին հանում սահմանների ճշգրտման, ազգային հանրապետութիւնների իրաւունքների ընդլայնման, ազգային լեզուի պաշտպանութեան եւ բազմաթիւ այլ խնդիրներ:

Ազգային զարթօնքի ապահովման գործում անգնահատելի դեր խաղացին հայ գրողները, մշակոյթի գործիչները: 1959ին լոյս տեսաւ Պ. Սեւակի «Անլուելի զանգակատուն» պօէմը, շուրթից չուրթ էին փոխանցւում Յովկ. Շիրազի անտիպ հայրենասիրական բանաստեղծութիւնները:

Բարձրանում էր ժողովրդի քաղաքական գիտակցութիւնը, պատմական հայրենիքի կորստի հարցում միջազգային ուժերի եւ բոլշեվիկեան վարչակարգի հակահայկական քաղաքականութեան մասին պատկերացումը:

1964ին տարածուած թուոցիկներից մէկում ասուած էր. «Հայեր, բաւ է միայն մտածել ու յուզուել, պէտք է բողոքել, պայքարել: Համայն ուժերով պահանջեցէք Զաւախքը, Ղարաբաղն ու Նախիջեւանը: Պահանջեցէք եւ դուք, Ախալքալաքի՝ հայեր, մի՛ թողէք հայոց հողերը օտարի ձեռքում:»

**Յաւերժացրէք Ձեր նախնիների յիշատակը:**

**Միացէք մայր Հայաստանին»<sup>13</sup>:**

Ազգային զարթօնքի անմիջական արդիւնքն էր 1965 Ապրիլի 24ին Երեւանի ԱԼ Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնի չէնքում հայոց Մեծ եղեռնի 50ամեակի պետական միջոցառման կազմակերպումը, որը վերածուեց աննախաղէպ ցոյցի: Ցուցարարները վանկարկելով՝ «Հողերը, հողերը» բառերը, յաղթահարելով՝ ՊԱԿի եւ ոստիկանութեան դիմադրութիւնը՝ խուժեցին թատրոնի չէնք ու ներկայացրին համայն հայութեան արդար պահանջները՝ պաշտօնապէս դատապարտել ցեղասպանութիւնը եւ տէր կանգնել հայութեան իրաւունքներին: Հկկ կկ առաջին քարտուղար Ե. Զարուբեանի եւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի յորդորներից յետոյ ցոյցը հակաօրինական բնոյթից գերծ մնաց: Ցոյցը, սակայն, խոշորագոյն իրադարձութիւն էր կոմունիստական բռնատիրութեան գոյութեան ընթացքում եւ մեծ դեր խաղաց յետագայ իրադարձութիւնների վրայ:

«Հայաստանի վերամիաւորման շարժման կենտրոնական խորհուրդը» հանդէս եկաւ ընդարձակ վերլուծականով: Երեք էջանոց այդ փաստաթուղթը՝ «Կոչ բոլոր Հայրենասէր հայերին», «Պայքարը պէտք է շարունակուի» կարգախօսով գնահատական էր տալիս 1965 Ապրիլի 24ի ցոյցին եւ ընդգծում յետագայ անելիքները: Անդրադարձ կատարելով Հայկական հարցի անցած ուղուն, նշելով հայութեան իրաւունքների ոտնահարման բոլոր փորձերը, վերլուծելով ԽՍՀՄ վարած քաղաքականութիւնը Հայկական հարցի նկատմամբ, փաստաթուղթն արձանագրում էր, որ «...Հայկական հարցը ընդհանրապէս չի ստացել իր լուծումը, ինչպէս ամբողջ աշխարհի, այնպէս էլ ՍՍՌՄ սահմաններում: Հայ ժողովուրդը երբեք չի կարող անտեսել պատմական այս մեծ անարդարութիւնը եւ չի կարող հաշտուել ներկայ վիճակի հետ: Ապրիլի 24ը առաջին անգամ կոտրեց լուծութեան սառուցը եւ դրեց Հայկական հարցի լուծման համաժողովրդական պայքարի սկիզբը: Այդ պայքարը պէտք է շարունակուի, եւ այնքան ժամանակ, քանի դեռ արդարացի ու վերջնական լուծում չի ստացել Հայաստանի ու Հայ ժողովրդի վերամիաւորման հարցը»<sup>14</sup>:

<sup>13</sup> Անձնական արխիւ, թղ. 1, էջ 1:

<sup>14</sup> Անձնական արխիւ, էջ 2:

Այնուհետեւ փաստաթուղթը Հայկական հարցի լուծման գործում վճռական դեր վերապահելով հայ ժողովրդին, կոչ էր անում հայութեան ձայնը հասցնել «աշխարհի բախտը տնօրինող մեծ տէրութիւնների ականջին... ազդարարենք ամբողջ աշխարհին, թէ մենք չենք հաշտուել ու երեք չենք հաշտուելու Հայաստանի ու Հայ ժողովրդի մասնատուած վիճակի հետ, ...Հայկական հարցը օրակարգից երեք չպէտք է հանուի: Նրա լուծման համար մենք է պայքարենք ամէն օր, ամէն ժամ, տարբեր ձեւերով ու միջոցներով...»:

Փաստաթուղթ-թուուցիկը, նախանշելով ԽՍՀՄում Հայկական հարցի լուծման ուղիները, պահանջում էր Վրաստանին ու Աղբբեջանին բռնակցուած հայկական հողերի վերամիաւորում մայր Հայրենիքին, համաձայն տեղի բռնակչութեան ցանկութեան, ասել է՝ ինքնորոշման իրաւունքի պահանջներով: Իսկ միջազգային ասպարէզում՝ երիտթուրքական արիւնու քաղաքականութեան համաշխարհային ճանաչման համելու, պատմական Հայրենիքի ազատագրման ինդիրուներ:

«- Ապրիլի 24ը,- շարունակում է թուուցիկը,- նշուեց ոչ իբրեւ սոսկ 50ամեակ, այլ իբրեւ շարժման մի նոր էտապի սկիզբ: 51ամեակը պէտք է նշուի աւելի մեծ մասշտաբներով, քան 50ամեակը: Ապրիլի 24ը պէտք է դառնայ հայ ժողովրդի տրաղիցիոն օր, նրա արդարացի բողոքի ու պահանջի օր»<sup>15</sup>:

Շարունակելով իր ազգային քարոզչութիւնը՝ ՀԴԸ ծածկագրով (թերեւս Հայ Դատի Ընկերութիւն- Յ.Զ) թուուցիկը, դիմելով հայ ժողովրդին, կոչ էր անում շարունակել սկսուած հայրենանուէր գործը. «Համագումարի նախօրեակին (խօսքը ՀԿԿ 24րդ համագումարի մասին է- Յ.Զ.) Մարտի 27ին, ժամը 11ին, համագումարին եւ խորհրդային կառավարութեանը նուիրուած ողջոյնի լոգունգներով ու առաջնորդների նկարներով դուրս գանք ցոյցի եւ պահանջենք Հարաբաղն ու Նախիջեւանը միացնել Հայաստանին»<sup>16</sup>:

Ազգային գիտակցութեան, հարազատ ժողովրդի ճակատագրի հոգածութեան արդիւնք էր հայ ժողովրդի անունից ԽՄԿԿ ենտկոմի Քաղըիւրոյին ուղղուած «Բաց նամակ» փաստաթուղթը, որը դատապարտելով խորհրդային կառավարութեան նախաթը,

<sup>15</sup> Անդ, էջ 3:

<sup>16</sup> Անդ:

**Յաւերժացրէք Ձեր նախնիների յիշատակը:**

**Միացէք մայր Հայաստանին»<sup>13</sup>:**

Ազգային զարթօնքի անմիջական արդիւնքն էր 1965 Ապրիլի 24ին Երեւանի Արևոտիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնի շնչքում հայոց Մեծ եղեռնի 50ամեակի պետական միջոցառման կազմակերպումը, որը վերածուեց աննախադէպ ցոյցի: Ցուցարարները վանկարկելով՝ «Հողերը, հողերը» բառերը, յաղթահարելով ՊԱԿի եւ ոստիկանութեան դիմադրութիւնը՝ խուժեցին թատրոնի շնչնք ու ներկայացրին համայն հայութեան արդար պահանջները՝ պաշտօնապէս դատապարտել ցեղասպանութիւնը եւ տէր կանգնել հայութեան իրաւունքներին: Հկկ կկ առաջին քարտուղար եւ Զարուբեանի եւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի յորդորներից յետոյ ցոյցը հակաօրինական բնոյթից զերծ մնաց: Ցոյցը, սակայն, խոշորագոյն իրադարձութիւն էր կոմունիստական բռնատիրութեան գոյութեան ընթացքում եւ մեծ դեր խաղաց յետագայ իրադարձութիւնների վրայ:

«Հայաստանի վերամիաւորման շարժման կենտրոնական խորհուրդը» հանդէս եկաւ ընդարձակ վերլուծականով: Երեք էջանոց այդ փաստաթուղթը՝ «Կոչ բոլոր Հայրենասէր Հայերին», «Պայքարը պէտք է շարունակուի» կարգախօսով գնահատական էր տալիս 1965 Ապրիլի 24ի ցոյցին եւ ընդգծում յետագայ անելիքները: Անդրադարձ կատարելով Հայկական հարցի անցած ուղուն, նշելով հայութեան իրաւունքների ոտնահարման բոլոր փորձերը, վերլուծելով ԽՍՀՄ վարած քաղաքականութիւնը Հայկական հարցի նկատմամբ, փաստաթուղթն արձանագրում էր, որ «...Հայկական հարցը ընդհանրապէս չի ստացել իր լուծումը, ինչպէս ամբողջ աշխարհի, այնպէս էլ ՍՍՌՄ սահմաններում: Հայ ժողովուրդը երբեք չի կարող անտեսել պատմական այս մեծ անարդարութիւնը եւ չի կարող հաշտուել ներկայ վիճակի հետ: Ապրիլի 24ը առաջին անգամ կոտրեց լրութեան սառոյցը եւ դրեց Հայկական հարցի լուծման համաժողովրդական պայքարի սկիզբը: Այդ պայքարը պէտք է շարունակուի, եւ այնքան ժամանակ, քանի դեռ արդարացի ու վերջնական լուծում չի ստացել Հայաստանի ու Հայ ժողովրդի վերամիաւորման հարցը»<sup>14</sup>:

<sup>13</sup> Անձնական արխիւ, թղ. 1, էջ 1:

<sup>14</sup> Անձնական արխիւ, էջ 2:

Այնուհետեւ փաստաթուղթը Հայկական Հարցի լուծման գործում վճռական դեր վերապահելով հայ ժողովրդին, կոչ էր անում հայութեան ձայնը հասցնել «աշխարհի բախտը տնօրինող մեծ տէրութիւնների ականջին... ազդարարենք ամբողջ աշխարհին, թէ մենք չենք հաշտուել ու երբեք չենք հաշտուելու Հայաստանի ու Հայ ժողովրդի մասնատուած վիճակի հետ, ...Հայկական Հարցը օրակարգից երբեք չպէտք է հանուի: Նրա լուծման համար մենք պէտք է պայքարենք ամէն օր, ամէն ժամ, տարբեր ձեւերով ու միջոցներով...»:

Փաստաթուղթ-թուուցիկը, նախանշելով ԽՍՀՄում Հայկական Հարցի լուծման ուղիները, պահանջում էր Վրաստանին ու Աղբքեջանին բռնակցուած հայկական հողերի վերամիաւորում մայր Հայրենիքին, համաձայն տեղի բնակչութեան ցանկութեան, ասել է՝ ինքնորոշման իրաւունքի պահանջներով: Իսկ միջազգային ասպարէզում՝ երիտթուրքական արիւնոտ քաղաքականութեան համաշխարհային ճանաչման հասնելու, պատմական Հայրենիքի ազատագրման խնդիրներ:

«- Ապրիլի 24ը,- շարունակում է թուուցիկը,- նշուեց ոչ իբրեւ սոսկ 50ամեակ, այլ իբրեւ շարժման մի նոր էտապի սկիզբ: 51ամեակը պէտք է նշուի աւելի մեծ մասշտաբներով, քան 50ամեակը: Ապրիլի 24ը պէտք է դառնայ հայ ժողովրդի տրադիցիոն օր, նրա արդարացի բողոքի ու պահանջի օր»<sup>15</sup>:

Շարունակելով իր ազգային քարոզչութիւնը՝ ՀԴԸ ծածկագրով (թերեւս Հայ Դատի Ընկերութիւն- թ.Զ) թուուցիկը, դիմելով հայ ժողովրդին, կոչ էր անում շարունակել սկսուած հայրենանուէր գործը. «Համագումարի նախօրեակին (խօսքը ՀԿԿ 24րդ համագումարի մասին է- թ.Զ.) Մարտի 27ին, ժամը 11ին, համագումարին եւ խորհրդային կառավարութեանը նուիրուած ողջոյնի լոգունդներով ու առաջնորդների նկարներով դուրս դանք ցոյցի եւ պահանջենք Հարաբաղն ու նախիջեւանը միացնել Հայաստանին»<sup>16</sup>:

Ազգային գիտակցութեան, հարազատ ժողովրդի ճակատագրի հոգածութեան արդիւնք էր հայ ժողովրդի անունից ԽՄԿԿ կենտկոմի Քաղթիւրոյին ուղղուած «Բաց նամակ» փաստաթուղթը, որը դատապարտելով խորհրդային կառավարութեան նախա-

<sup>15</sup> Անդ, էջ 3:

<sup>16</sup> Անդ:

գահի 1966 Դեկտեմբերի 20ին Անկարայում արուած յայտարարութիւնը, աւելացնում էր. «Յայտնի է, որ Հայաստանի տերիտորիայի մեծ մասը ժամանակաւորապէս գտնում է Թուրքիայի տիրապետութեան տակ: Այդ տերիտորիաների օրինական տէրը հայ ժողովուրդն է, եւ առանց նրա կարծիքը հաշուի առնելու ոչ ոք իրաւունք չունի նման յայտարարութիւն անելու:

**ՍՍՀՄԸ սուվերէն հանրապետութիւնների միութիւն է, եւ նրա կառավարութիւնը պարտաւոր է հաւասար կերպով արտայայտել եւ պաշտպանել նրա կազմի մէջ մտնող սոցիալիստական հանրապետութիւնների եւ ազգերի շահերը: Մինչդեռ Ա. Ն. Կոսիդինի յայտարարութիւնը, որը արուել է առանց հայ ժողովրդի գիտութեան ու համաձայնութեան, հակասում է ողջ հայութեան ամենակենսական շահերին... հայ ժողովուրդը լաւ է գիտակցում, որ այսօր, ստեղծուած միջազգային իրադրութեան պայմաններում հնարաւոր չէ Հայկական հողերը առանց արիւնի միացնել Սովետական Հայաստանին: Նա չի էլ պահանջում այդ: Սակայն դա իրաւունք չի տալիս հրաժարուել այդ տերիտորիաներից: Բողոքելով Ա. Ն. Կոսիդինի՝ Անկարայում կատարած քայլի դէմ հայ ժողովուրդը գտնում է, որ Սովետական կառավարութիւնը իրաւունք չունի առանց հայ ժողովրդի գիտութեան ու համաձայնութեան հանդէս գալ այնպիսի յայտարարութիւններով, որոնք հակասում են նրա կենսական շահերին»<sup>17</sup>:**

Ազգային ինքնագիտակցութեան վերընթաց ուղին, Հայկական հարցի նկատմամբ խորհրդային կառավարութեան անտարբեր վերաբերմունքը, Ազգային Միացեալ կուսակցութեան (ԱՄԿ) դէմ ծաւալուած հալածանքները, այլախոհ անուանումով նրա անդամների բռնադատումները չին կարող ծառայել մոսկովեան վարչակարգի որդեգրած նպատակների իրադործմանը: ԱՄԿի «Փարոս» եւ «Յանուն Հայրենիքի» թերթերը լայն տարածում էին ստանում երիտասարդութեան շրջանում, հայ ժողովրդի ստուար զանգուածների սեփականութիւնն էին դառնում ինչպէս Մեծ Եղեռնի հետ կապուած մանրամասնութիւնները, այնպէս էլ Հայկական հարցի նկատմամբ դարի առաջին քասանամեակում իրականացուած դաւադրական քաղաքականութիւնը:

1966 Յուլիսին ԽՄԿԿ կկ հասան 40000 ստորագրութեամբ դարաբաղցիների եւ հայ մտաւորականութեան համախօսականնե-

<sup>17</sup> Անդ:

ըլ, որոնք պահանջում էին Ղարաբաղը միացնել մայր Հայրենիքին: Սակայն, եղբայրութեան նոր դաշինք կնքելով Աղրբեջանի հետ, մոսկովեան իշխանութիւնները այս անգամ եւս թաղեցին ճշմարտութիւնը, եւ հայ ժողովրդի արդար պահանջն անտեսուեց:

Կոմունիստական վարչակարգի թշնամական վերաբերմունքը գալիս էր համոզելու, որ Հայկական հարցի բարձրացման միակ երաշխիքը սփիւռքահայութեան կազմակերպուած գործունէութիւնն է:

Սկսուեց սփիւռքի կազմակերպական գործընթացը, որին ուղղութիւն էր տալիս 1972 Վաշինգտոնում ստեղծուած Հայկական համագումարը: Կազմակերպութեցին Հայրենակցական միութիւններ, որոնք հիմնականում զբաղում էին բարեգործական աշխատանքներով եւ հայութեան բեկորներին փրկում ուժացման վտանգից: Արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեցին ազգային քաղաքական կուսակցութիւնները: Ռամկավարները կազմաւորեցին Թեքէեան մշակութային միութիւնը, Հնչակեանները՝ Հայ մարզական միութիւնը, ՀՅ Դաշնակցութիւնը՝ Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը, Հայ մարմնամարզական ընդհանուր միութիւնը, Հայ օգնութեան միութիւնը: Տպագրուում էին մի շարք թերթեր ու ամսագրեր, օգտագործուում էին օտարակեզու թերթերն ու հրատարակութիւնները, որոնց էջերում գետեղուում էին Հայկական հարցին նուիրուած յօդուածներ: Արժէքաւոր գործունէութիւն ծաւալեցին Հայ կաթոլիկ եւ Աւետարանական եկեղեցիները, բացուեցին դպրոցներ ու ակումբներ, հաւաքատեղիներ, որոնցում տարւում էին քարոզչական աշխատանքներ: Հայապահպանութեան, ազգային գիտակցութեան բարձրացմանը իրենց լուման բերեցին Բէյրութի, Երուսաղէմի, Հալէպի, Կիպրոսի Մելքոնեան վարժարանները: Միաժամանակ պայքար էր տարւում սփիւռքը տարանջատումից հեռու պահելու խորհրդային քաղաքականութեան դէմ: Սփիւռքի զօրեղացումը դիտելով ազգային խնդիրների լուծման կարեւորագոյն լծակ՝ մեծ աշխատանքներ կատարուեցին հայութեան տնտեսական կարողութիւնների պահպանման ու աւելացման ուղղութեամբ, նպատակասլաց էին օգտագործուում բարեգործական ու կտակուած հիմնադրամները:

70ական թուականների այս վերելքը այդուհետ պէտք է օգտագործուէր Մեծ Եղեռնի համաշխարհային ճանաչման գործին,

հիմքեր նախապատրաստուէին Հայկական հարցի լուծման համար։ Հետեւելով մայր Հայրենիքի օրինակին, որտեղ 1967 կառուցուեց Մեծ Եղեռնի Յուշակոթողը, սփիւռքի հայաշատ կենտրոններում եւս յուշարձանների կառուցման փորձեր էին արտում։ Առաջիններից մէկը այդ յաջողուեց մարսելահայութեանը, եւ 1973 Մարսելում բացուեց Եղեռնի անմեղ զոհերին նույիրուած յուշարձանը։ Նոյն թուականին ՄԱԿի ռասիզմի եւ ցեղասպանութեան յանձնաժողովը քննարկեց հայոց Մեծ Եղեռնի խնդիրը եւ տեղեկագրում նրան նույիրեց 30րդ յօդուածը։

1973 Յունուարի 27ին համայն սփիւռքը, մայր Հայրենիքի հայրենասիրական ուժերը, աշխարհի արդարամիտ ժողովուրդները ականատեսը եղան եղեռն տեսած, ընտանիքի 27 անդամներին կորցրած, 78ամեայ մի հայորդու արդար ցասմանը։ Գուրգէն Եանիկեանը, բնիկ կարնեցի հայրենասէրը, Սանտա Բարբարա քաղաքում սպանեց Թուրքիայի գլխաւոր հիւպատոսին ու նրա օդնականին։ Հայկական հարցի լուծման նոր փուլ էր ձեւաւորուում։ Գ. Եանիկեանի խօսքերով ասած՝ «Նոր տեսակի պատերազմի» փուլը։ Հայրենասէրին պաշտպանելու համար կազմուեց «Եանիկեանի բարեկամներու» յանձնախումբ։ Դատավարութիւնն սկսուեց 1974 Մայիսի 29ին, տեւեց չորս շաբաթ։ Ամերիկեան դատարանը անկարող եղաւ կրկնելու գերմանական դատարանի մարդասիրական քայլը եւ մեծ հայրենասէրին դատապարտեց ցմահ բանտարկութեան։ 88ամեայ հիւանդ Եանիկեանը ազատուեց բանտից 1984ին եւ նոյն թուականի Փետրուարի 27ին կնքեց իր մահկանացուն՝ անջնջելի հետք թողնելով հայ պատարական պայքարի պատմութեան, Հայկական հարցը միջազգային ատեաններ բարձրացնելու ճանապարհին։

«Ինչ-ինչ պատճառներով, նրանք, որոնք վերցրել էին իրենց վրայ պաշտպանելու ու հետապնդելու Հայկական Դատը, գրում էր խիզախ հայորդին, իւրայսատուկ պատասխան տալով նաեւ այն հարցին, թէ ինչո՞ւ կատարեց իր ահաբեկչութիւնը, հետ էին մնացել կեանքի օրուայ թելադրանքներից եւ զբաղուած էին ուրիշ հարցերով, որոնք յաճախ կապուած էին իրենց անձնական շահի հետ, իսկ դրութեան արդիւնքը եղաւ այն, որ մեր այդ Հայկական Դատը գերեզման էր գրուած, ու պատրաստուում էին ծածկել մոռացութեան քողով, որ հարցը վերջնական փակուի։

Որպէս մի հայ անհատ ես չէի կարող ընդունիլ այդ: Պապերից ստացած արդարութեան ոգին իմ մէջ հրաբուխ դարձաւ, դուրս ժայթքեց ու այրեց թաղումը կատարողների դէմքերը:

Ու ես, մաքրելով տասնեակ տարիների մոռացութեան փոշին, մեր դատը, Հայկական Դատը դրի մարդկութեան առաջ:

...պատմութիւնը մեզ փաստում է, որ խօսքերը քամին է տանում, խոստումները մոռացում են, արդարութիւն ու ազատութիւն բառերը կորցնում են իրենց իմաստները, եթէ նրանք չեն պաշտպանում անհատներից կազմուած ուժեղ բռունցքով: Թող իմ սիրելի երիտասարդ մատաղ սերունդը գիտնայ, որ դեռ մարդկութեան ամբողջ պատմութեան ընթացքին ոչ մի անգամ չի պատահել, որ մի ցեղի ազատութիւնը տրուի նրան ոսկէ պնակի վրայ...»<sup>18</sup>:

Ինչպէս եւ կանխատեսում էր Գ. Եանիկեանը, սփիւռքահայութեան քաղաքական ձեւաւորուած պայքարը տուեց իր առաջին պտուղը: 1974 Մարտի ճին ՄԱԿի մարդու իրաւունքների յանձնաժողովը հայոց Մեծ Եղեռնը ճանաչեց որպէս 20րդ դարի առաջին ցեղասպանութիւն: 1975 Ապրիլի 8ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն ընդունեց բանաձեռ, որով ճանաչում էր Հայոց Ցեղասպանութիւնը: 1975 Եղեռնի զոհերի յուշարձաններ կառուցուեցին Աթէնքում, Միլանում, Լիբանանում:

1975ին կազմաւորուեց «Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակը» (ՀԱՀԳԲ), կամ ԱՍԱԼԱ, որի կարգախօսն էր՝ «Լասն Հայութեան, Վասն Հայրենեաց»: Նպատակը կանխորոշել էր Գ. Եանիկեանը, ՀԱՀԳԲը, «...կենդանի բռունցք է որ պիտի ծունկի բերէ մեր ոխերիմ թշնամի թուրքը եւ դնէ մարդկութեան առաջ մեր իրաւացի պահանջները...»

...մօտ է ապագան, մօտ է հաշուեպահանջի ժամը...»<sup>19</sup>: Հայկական հարցի բարձրացման ահարեկչական ուղղութիւնը որդեգրել էր «...շարունակել մեր ժողովրդական զինեալ պայքարը, մինչեւ հայ ժողովրդի իտէալներուն իրականացումը-վերադառնալով մեր հայերու հայրենիքը եւ իրագործելով ինքնիշխան եւ ազատ ժողովուրդ մը ըլլալու իրաւունքը: Պիտի շարունակենք մեր թշնամիները հալածել աշխարհի բոլոր երկրներուն մէջ՝ առ ի

<sup>18</sup> Ա. Տ., Հայաստանի ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ, 1975-1995,  
13:

<sup>19</sup> Ա.Յ.:

պատասխան իրենց մեր ժողովուրդը աշխարհի մահիճին մէջ խեղդելու փորձերուն»<sup>20</sup>:

Պայքարը տարուելու էր ոչ թէ միայն Թուրքիայի դէմ, այլ նրա հովանաւորների ու հայութեան ողբերգութիւնը կոծկողների դէմ: Աշխարհի տարբեր մայրաքաղաքներում ու երկրներում կազմակերպուած ահաբեկչութիւններին զոհ էին դառնում թուրք դեսպաններն ու հիւպատունները, Հայկական հարցի դէմ մեղանչողները: Մինչեւ 1983ի պառակտումը, ՀԱՀԳԲին զգալի ներդրում ունեցաւ Հայկական հարցը միջազգային ատեաններին հասցնելու գործում, շարժուեց 70 տարիների սառոյցը, աշխարհի ժողովուրդներին հասու դարձաւ պատմական անարդարութիւնը, եւ առաջադէմ մարդկութեան պարտադրանքով տարբեր երկրներ սկսեցին ուշադրութեան կենտրոն դարձնել Հայկական հարցը:

1975 Հոկտեմբերին կազմաւորուեց «Հայկական ցեղասպանութեան արդարութեան մարտիկներ» կազմակերպութիւնը (ՀՅԱՄ), որ ուխտել էր ահաբեկչութեան ենթարկել թուրք դեսպաններին ու պաշտօնեաններին: Արդարութեան մարտիկները, դիմելով այդ ինքնազոհութեանը, ցանկանում էին ճանաչում բերել Հայոց Ցեղասպանութեանը եւ լուծման արժանացնել բազմաչար Հայկական հարցը: Բնաբան ունենալով զինուած պայքարի գաղափարը՝ մարտիկները Եւրոպայում ու ԱՄՆում իրականացրին մի շարք գործողութիւններ, որոնցից ամենանշանաւորը Լիսաբոնում թուրքական դեսպանատան գրաւումն ու պայթեցումն էր: Գործողութիւնն իրականացրին Վաչէ Տաղլեանը, Արաքերձը և Ամերիկանը, Սանկտ Պետերբուրգը, Մասկովը և Արմամեանը: Անձնազոհ հնգեակը նախօրօք գիտէր, որ գնում է անխուսափելի մահուան: Գործողութիւնից առաջ տուած հարցազրոյցում Վաչէ Տաղլեանը այսպէս է ներկայացնում իրենց նպատակը: «Մեր հողերէն դուրս մենք ոչինչ ենք. օտարութեան, պանդխտութեան մէջ մենք բան մը չենք ներկայացներ: Միշտ փորձած են մեզ մոռնալ, փորձած են մեզի մոռցնել տալ մեր հողերը, մեր հայրենիքը: Բայց մէկ բան թող յատակ ըլլայ մեր ժողովուրդին, որ մենք հայեր ենք եւ որեւէ ատեն չենք մոռնար մեր հայրենիքը: Կայ երիտասարդութիւն մը, որ կը հետապնդէ իր դատը եւ անպայման պիտի հասնի լուծումի մը»<sup>21</sup>: Լրացնե-

<sup>20</sup> Անդ, 19:

<sup>21</sup> Երկիր, 1993, 5:

լով ընկերոջը՝ Արա Քերճըլեանը աւելացնում է. «Կ'ուզեմ, որ իմ ընկերներս, որոնք ինծի հետ մեծացած են, նոյն միջավայրի մէջ մեծացած ենք, նոյն տեղերը յաճախած ենք, համոզուին այս մէկ կէտին եւ չըսեն ընտանիքը, կեանքը, ապագան։ Առանց հայրենիքի, առանց մեր հողերուն ո՛չ ապագայ կայ, ո՛չ կեանք կայ, ո՛չ ընտանիք կ'ըլլայ»<sup>22</sup>։

Բացի մեծ ճանաչում եւ հանրայայտ գործողութիւններ իրականացրած վերոյիշեալ կազմակերպութիւններից, գործում էին նաեւ շուրջ 10 գաղտնի կազմակերպութիւններ, որոնցից նշանաւոր էին «Հայաստանի ազատագրութեան կազմակերպութիւնը», «Հայ ազգային շարժումը», «Հայկական եղեռնի վրիժառութեան կոմանդուսը», «Հայաստանի գաղտնի բանակը», «Հայկական Գործի պաշտպանութեան կոմիտէն» եւ այլն։

Սփիւրքահայ եղբայրների հետ իրենց գաղտնի գործունէութիւնն էին շարունակում ընդյատակեայ կազմակերպութիւնները։ Կատարելով կենտրոնի թելադրանքը՝ Հայաստանի ՊԱԿը 1965-1975, խուլիդանութեան, կաշառակերութեան, խաբեքայութեան եւ այլն սարքովի մեղադրանքներով ազատազրկման վայրեր ուղարկեց հայրենասէր շատ գործիչների։ Այս քաղաքականութեան հետեւանքն էր նաեւ Ստեփան Զատիկեանի, Յակոբ Ստեփանեանի, Զաւէն Բաղդասարեանի շինծու մեղադրանքով ձերբակալուածները 15 ամիս անց, փակ դատավարութեամբ դատապարտուեցին մահապատժի, որ արագացուած եղանակով, դատավճորից երկու օր անց հապճեպօրէն ի կատար ածուեց։

1977ի յունուարեան այս հաշուեյարդարը բուռն արձագանգի արժանացաւ։ Այլախոհ յայտարարուած ակադեմիկոս Ա. Սախարովի 1990ին նիւ Եորքում տպագրած «Յիշողութիւններ» գրքում տեղ գտաւ «Զատիկեանի գործը» բաժինը, որ կատարուածին գնահատական տալուց բացի յայտնում է մի շարք մանրամասներ։ Ինչպէս նշում է Ա. Սախարովը, Ս. Զատիկեանը առաջադրուած մեղադրանքի օրը եղել է Երեւանում։ Թէեւ ՊԱԿին յաջողուել է նրա տնից «յայտնաբերել» պայթուցիկ սարքի գծագիր, բայց դա իրականում եղել է դռան զանգի միացման պարզ

<sup>22</sup> Անդ:

սխեմա, ինչն էլ դարձել էր գվահաւոր մեղադրանքի ապացոյց, եւ հայորդիները հապշտապ ենթարկուեցին դաժան պատժի: Տարիները յետոյ, երբ յայտնաբերուեցին իսկական յանցագործները, խորհրդային կառավարութիւնը զլացաւ յանիրաւի պատժուածներին գոնէ յետմահու արդարացնելու քայլեր ձեռնարկելուց:

Հայ ժողովրդի ազատագրական արդար պայքարին իրենց աջակցութիւնը յայտնեցին մի շարք երկրների առաջադէմ գործիչներ: Նրանք կազմակերպում էին հայամէտ գործողութիւններ, որոնք արձագանգուում էին միջազգային կազմակերպութիւնների կողմից: Այս գործում իրենց ծանրակշիռ լուման ներդրեցին ՀՅԴ կազմաւորած «Հայ Դատի» յանձնախմբերը, որոնք գործում էին բազմաթիւ երկրներում: Հայ աւանդական կուսակցութիւնները, հեռու մնալով, աչքաթող անելով տարածայնութիւնները, միակամ էին Հայկական հարցի առնչութեամբ: Նրանք միասին նախաձեռնում էին միջոցառումներ, դիմումներ ու համախօսականներ յղում միջազգային կազմակերպութիւններին ու տարբեր երկրների կառավարութիւններին:

1983 Օգոստոսին կանադայում գումարուած Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը 1915ին թուրքերի կողմից իրականացրած կոտորածները որակեց ցեղասպանութիւն եւ դիմեց ՄԱԿին՝ ճանաչելու այդ պատմական ճշմարտութիւնը:

1984 Ապրիլի 13-16ը Փարիզում Սորբոնի համալսարանի դահլիճում գումարուած ժողովուրդների մշտական դատական ատեանը, առանձին նստաշրջան հրաւիրելով Հայոց Ցեղասպանութեան առիթով, ընդունեց որոշում, որտեղ հիմք ընդունելով միջազգային իրաւունքները, ՄԱԿի 1943 Դեկտեմբերի 9ի կոնուենցիան, արձանագրում էր. «Յ. Երիտթուրքերի կառավարութիւնը մեղաւոր է այս ցեղասպանութեան համար, նկատի ունենալով 1915ից 1917 ընթացքում կատարուածը:»

4. Հայերի ցեղասպանութիւնը նաեւ «միջազգային յանցագործութիւն է», որի համար պէտք է պատասխանատուութիւն կրի Թուրքական պետութիւնը, առանց պատրուակելու այն հանգամանքը, թէ նախկին ու ներկայ պետութիւնների միջեւ յաջորդականութիւն չկայ՝ պատասխանատուութիւնից խուսափելու համար:

5. Այդ պատասխանատուութիւնը առաջին հերթին պահանջում է պաշտօնապէս ճանաչել ցեղասպանութեան իրողութիւնը եւ հայ ժողովրդի կրած համապատասխան կորուստները:

**6. Միաւորուած ազգերի կաղմակերպութիւնը եւ նրա իւրաքանչիւր անդամը իրաւունք ունի պահանջելու այս ճանաչումը եւ դրանով աջակցելու հայ ժողովրդին»<sup>23</sup>:**

Միջազգային դատարանի մեկնարանութիւն ընդունող հաստատումը մէկ անգամ եւս ամրագրեց դեռեւս 1965 Հելսինկիի Խաղաղութեան միջազգային կոնգրէսի բանաձեւը, որը հայոց Մեծ Եղեռնը գնահատում էր որպէս «ազգային հարցը մի ամբողջ ժողովրդի բնաջնջման ուղիով լուծելու» հրէշաւոր ծրագր:

1985ին Արգենտինան եւ Ուրուգուայը Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող որոշումներ ընդունեցին:

1987ին, եռամեայ քննարկումներից յետոյ, անտեսելով թուրքիայի յամառ դիմադրութիւնն ու սպառնալիքները, խարդաւանքները, վարձու մամուլի կողմից սկսուած հակահայկական քարոզչութիւնը, իրադարձութիւնների խեղաթիւրումները, Եւրոպական խորհրդարանը Յունիսի 18ին Հայկական հարցի լուծման բանաձեւ ընդունեց.

«Դ. Նկատի ունենալով, որ թուրքական պետութիւնը մերժում է ցեղասպանութեան մեղադրանքը որպէս անհիմ».

**Ե. Հաստատելով, որ թուրքական կառավարութիւնը, մերժելով մինչեւ օրս ճանաչել 1915ի ցեղասպանութիւնը, շարունակում է այդպիսով զրկել հայ ժողովրդին իր սեփական պատմութեան իրաւունքից».**

**Զ. Նկատի ունենալով, որ պատմականօրէն ապացուցուած հայոց ցեղասպանութիւնը մինչեւ այժմ ոչ ենթարկուել է քաղաքական դատապարտման եւ ոչ էլ ստացել համապատասխան հատուցում».**

**Է. Նկատի ունենալով, որ թուրքիայի կողմից հայոց ցեղասպանութեան ճանաչումը այսուհետեւ կը դիտուի որպէս հայերի նկատմամբ բարոյական իրաւունքի վերականգնման խորապէս մարդկային ակտ, միայն պատիւ կարող է բերել թուրքական կառավարութեանը».**

**Ը. Խորապէս ափսոսանք յայտնելով եւ դատապարտելով 1973ից 1986 թուականների ընթացքում հայկական խմբաւորումների անհմաստ ահաբեկչութիւնը, ինչպէս նաեւ բազմաթիւ մա-**

<sup>23</sup> ԽՈՒՐՇՈՒՐԵԱՆ, Լ., Հայկական հարցը, Երևան 1995:

հափորձերը, որոնց հետեւանքով զոհուեցին կամ վիրաւորուեցին բազմաթիւ անմեղ մարդիկ, ինչը դատապարտուեց հայ ժողովրդի ճնշող մեծամասնութեան կողմից.

Նկատի ունենալով, որ բոլոր իրաւայաջորդ թուրքական կառավարութիւնների անհաջող դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարուածութեան թուլացմանը.

1. Այն կարծիքն է յայտնում, որ Հայկական հարցը, ինչպէս նաեւ թուրքիայում ազգային փոքրամասնութիւնների հարցը պէտք է քննարկուեն թուրքիայի եւ Եւրոպական տնտեսական համագործակցութեան միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների շրջանակում. ընդգծում է, որ դեմոկրատիան կարող է արմատապէս հաստատուել մի երկրում այն պայմանով միայն, եթէ այդ երկիրը ճանաչի եւ հարստացնի իր պատմութիւնը իր էթնիկական եւ մշակութային այլազանութեամբ:

2. Գտնում է, որ ողբերգական իրադարձութիւնները, որ տեղի ունեցան 1915-1917 թուականներին Օսմանեան կայսրութեան տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանութիւն, համաձայն «Յեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ դրա համար պատժելու մասին» կոնուենցիայի, ընդունուած ՄԱԿի Գլխաւոր ասամբլեայի կողմից 1943 թուականի դեկտեմբերի 9-ին:

Նշում է միաժամանակ, որ ժամանակակից թուրքիան պատասխանատու չի կարող համարուել Օսմանեան կայսրութեան հայ քնակչութեան ողբերգութեան համար եւ ամենայն հաստատակամութեամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձութիւնների ճանաչումը որպէս ցեղասպանութեան առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրաւական կամ նիւթական որեւէ պահանջի այսօրուայ թուրքիայի նկատմամբ:

3. Պահանջում է (Եւրոպական) Խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարութեան վրայ, որպէսզի վերջինս ճանաչի 1915-1917 թուականների հայերի հանդէպ կազմակերպուած ցեղասպանութիւնը եւ այդպիսով նպաստի քաղաքական երկխօսութեան հաստատմանը թուրքիայի եւ հայերի լիազօր պատուիրակների միջեւ:

4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դէմ անցեալում երիտթուրքական կառավարութեան կողմից գործադրուած ցեղասպանութեան մերժումը ներկայիս թուրքական կառավարութեան

**Կողմից,** Յունաստանի հետ գոյութիւն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրաւական նորմերի կիրառումից հրաժարումը կիպրոսում, թուրքական օկուպացիոն զօրքերի պահպանումը, ինչպէս նաև քրդական իրադարձութիւնների ժխտումը այդ երկրում (թուրքիայում) իսկական պառլամենտար դեմոկրատիայի բացակայութիւնը, անհատական, հասարակական ու յատկապէս կրօնական ազատութիւնների ոնտահարումը՝ այս ամէնը հանդիսանում են անյաղթահարելի արգելքներ Եւրոպական Տնտեսական համագործակցութեան կազմի մէջ թուրքիայի հնարաւոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգութիւնը, միանում է ազգային ինքնատիպութիւնը զարգացնելու նրա ցանկութեանը, երաշխաւորելու իր իրաւունքները որպէս փոքրամասնութիւն եւ անարգել օգտուելու մարդու եւ քաղաքացիների իրաւունքներից, ինչպէս որ դրանք սահմանուած են Մարդու իրաւունքների Եւրոպական կոնուենցիայի դրոյթներում ու նրա համապատասխան արձանագրութիւններում»:

Այնուհետեւ Եւրախորհրդարանի որոշումը խօսում է Թուրքիայում ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների ոտնահարման փաստերի, նրանց մշակութային արժէքների նկատմամբ ոտնձգութիւնների, յուշարձանների, ճարտարապետական ժառանգութեան պահպանման, Խորհրդային Միութիւնում հայութեան ազատութիւնների խախտումների մասին, դատապարտում դրանք, եւ հայ եւ թուրք ժողովուրդներին կոչում հաշտութեան, ապա յամելագրում։ «13. Կոչ է անում Եւրոպական տնտեսական համագործակցութեան անդամ երկրներին՝ հոչակելու "20րդ դարում գործադրուած ցեղասպանութիւնների եւ մարդկութեան դէմ ոճրագործութիւնների յիշատակի օր", մասնաւորապէս զոհ գնացած հայերի եւ հրեաների»<sup>24</sup>:

Եւրախորհրդարանի որոշումը պէտք է փոխանցուէր ինչպէս կազմակերպութեան անդամ երկրներին, այնպէս էլ Թուրքիայի, իրանի, ԽՍՀՄ կառավարութիւններին, ՄԱԿի գլխաւորքարութիւններին։

Եւրախորհրդարանի որոշումը առաջին լուրջ ներդրումն էր Հայկական հարցի ճանաչման ու լուծման ճանապարհին։ Մակայն այն հեռու էր բաւարար լինելու աստիճանից, այն առումով, որ

<sup>24</sup> Ա.69, 65-69:

**որոշումը** առաջարկութիւն էր ցեղասպանութիւն կատարած պետութեան իրաւայաջորդ կառավարութեանը եւ հաւաստում էր, որ ցեղասպանութիւնը ճանաչելու դէքում անգամ, թուրքիայի ներկայիս կառավարութիւնը որեւէ պարտաւորութիւն չի ստանձնելու աշխարհասփիւռ հայութեան առջեւ, անգամ չէր լուծուելու նրա պատմական Հայրենիքի նկատմամբ իրաւունքների հարցը:

Զնայած այս կարեւոր բացթողումներին, որոշումը զսպաշապիկ էր դառնում Եւրախորհուրդ թուրքիայի մուտքի առումով, այնքան ժամանակ, քանի դեռ նրա կառավարութիւնը չէր ճանաչել գործադրուած ոճրագործութիւնը։ Բարեբախտաբար, առ այսօր էլ որոշումը պատնէշ է դարձել թուրքիայի այդ ձգտումների դէմ։

Այնուամենայնիւ Եւրախորհուրդի որոշումը առանձնայատուկ դերակատարում ունեցաւ Հայկական Հարցի միջազգայնացման ճանապարհին, աշխարհի ժողովուրդները հեղինակաւոր այդ կազմակերպութեան վճիռը գնահատեցին իր իսկ էութեամբ, եւ տեղաշարժ կատարուեց Հայկական Հարցի նկատմամբ դիրքորոշումներում։

1995 Ապրիլի 14ին Ռուսաստանի Պետդուման դատապարտեց Հայոց Ցեղասպանութիւնը եւ Ապրիլի 24ը համարեց յիշատակի օր։

Առ այսօր Հայոց Ցեղասպանութիւնը պետականօրէն ճանաչել են 18 երկիր, այդ թւում,

- Արգենտինան՝ 1985,
- Ուրուգուայը՝ 1985,
- Կիպրոսը՝ 1995,
- Յունաստանը՝ 1996,
- Լիբանանը՝ 1997,
- Բելգիան՝ 1998,
- Ֆրանսիան՝ 2001,
- Իտալիան՝ 2001,
- Կանադան՝ 2002,
- Հոլանդիան՝ 2004,
- Շուէդիան՝ 2004,

**Շուելյացարիան՝ 2004,  
Սլովենիան՝ 2004,  
Վենեսուելան՝ 2005,  
Աւստրիան՝ 2005,  
Լիտովիան՝ 2005,  
Լեհաստանը՝ 2005:**

1960-1980-ական թուականների ազգային զարթօնքը, Հայրենիքում եւ սփիւռքում իրականացուած միջոցառումները, Հայկական հարցի բարձրացման նոր մարտավարութիւնը մոռացութեան գրկից պոկեց հայ ժողովրդի ազգային գերխնդիրը եւ այն տեղափոխեց քննարկումների ասպարէզ, որտեղ առաջնային էր համարլում հայութեան իրաւունքների վերականգնումը պատմական Հայրենիքի նկատմամբ, ինչը սարսափի ու բուռն դիմադրութեան, պետական մակարդակի ընդդիմութիւն էր ստեղծում թուրքիայում:

Նոր մարտավարութեան, ապա նաեւ ռազմավարութեան մշակումը դառնում էր անհրաժեշտութիւն: Այս խնդիրների լուծման ամենամեծ արգելքը յարուցում էր խորհրդային վարչակարգը, որը որդեգրելով՝ «բաժանիր, որ տիրես» սկզբունքը, 1936ի ստալինեան սահմանադրութեան դոգմաները, նախապատրաստում էր ժողովուրդների ինքնորոշման իրաւունքն ու ազատութեան ձգտումները խեղղելու մի նոր ժողովածուի ստեղծումը, որտեղ նախատեսում էր ազգային հանրապետութիւններին պարտադրել նաեւ լեզուի մոռացութեան եւ ուսւաց լեզուն պետական լեզու ճանաչելու խնդիրների լուծումը:

Բրեժենեւեան սահմանադրութեան նման հակումները բողոքի ու դիմադրութեան հզօր շարժման սկիզբ հանդիսացան ազգային հանրապետութիւններում: Խորհրդային Հայաստանի մտաւորականութիւնը, ազգայնական ուժերը իրենց ձայնը միացրին Ուկրաինայի ու Մերձբալթիկայի ժողովուրդների հետ, ազգերի ձուլման իւրայատուկ այդ փորձարկումը տեղի տուեց, ու ազգային հանրապետութիւններում պետական լեզու ճանաչուեց ազգային լեզուն: Այս բարեյաջող աւարտը խոչոր ներդրում էր Հայկական հարցի ապագայի առթիւ: Հայկական հարցը ազատուեց եւս մէկ արհեստական արգելքից:

Գնալով հասունանում էր բոլշեւիկեան կայսրութեան ճգնաժամը: 80ական թուականներին այն արդէն անժխտելի իրողութիւն էր: Խորհրդային նոր ղեկավարութիւնը երկիրը փրկելու նոր ուղի ընտրեց: Ասպարէզ բերուեց գորբաչովեան վերակառուցումը, որը խոստանում էր ոչ միայն տնտեսական վերելքի ապահովում, այլև քաղաքական ու ազգային ազատութիւններ: Վերջին հայեցակէտերը ընդունելով որպէս ազգային խնդիրների լուծման բարենպաստ իրավիճակներ՝ խորհրդային կայսրութեան բռնադատուած ժողովուրդները բարձրացրին իրենց ազգային խնդիրները: Այդ ժողովուրդների առաջին շարքերում էր հայ ժողովուրդը: Մկանում էր Հայկական հարցի լուծման նոր փուլը:

ՅՈՎՀԱՆՆԻՍ ԶԱՏԻԿԵԱՆ